ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ   Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի   Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-ը մայիսի, 2017թ., N16

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 10.05.2017Թ. ԹԻՎ 05 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ *համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ 10.05.2017թ. թիվ 05 նիստի օրակարգը՝
1.Հայանիստ համայնքի ավագանու՝ 2017թ. հունվարի 31-ի թիվ 05-ն որոշման հավելվածի մեջ փոփոխություն կատարելու մասին:
2.Հայանիստ համայնքի ավագանու՝ 2011թ. մայիսի 13-ի՝ «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 6 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3.Հայանիստ համայնքի 2017թ. վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխությունները հաստատելու մասին:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գաբրիելյան Արմեն
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Հարությունյան Իրինա
6.Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

10.05.2017թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

10-ը մայիսի, 2017թ., N17-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2017Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 05-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017թ. մարտի 23-ի N29.6/[398521]-17 հանձնարարականը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝ ավագանին որոշում է՝

1.Հայանիստ համայնքի ավագանու՝ 2017թ. հունվարի 31-ի՝ «Հայանիստ համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին» թիվ 05-ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխություններն և լրացումը՝

1.Աղյուսակ 4-ի «Ծրագրի անվանումը» սյունակում 4-րդ կետի «Խմելու ջրագծերի վերանորոգում» բառերը փոխարինել «Գետաշեն թաղամասի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում» բառերով:

2.Աղյուսակ 6-ի «Ծրագրի անվանումը» սյունակում 4-րդ կետի «Խմելու ջրագծերի վերանորոգում» բառերը փոխարինել «Գետաշեն թաղամասի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում» բառերով:

Ավագանու անդամներ՝

1. Ալեքսանյան Ռազմիկ կողմ
2. Գաբրիելյան Արմեն կողմ
3. Գևորգյան Սարգիս կողմ
4. Կատանյան Լևոն կողմ
5. Հարությունյան Իրինա կողմ
6.Մկրտչյան Գեորգի կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

10.05.2017թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10-ը մայիսի, 2017թ., N18

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2011Թ. ՄԱՅԻՍԻ 13-Ի՝ «ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով՝ *ավագանին որոշում է*՝

Հայանիստ համայնքի ավագանու՝ 2011թ. մայիսի 13-ի՝ «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 6 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
«Հովհաննես Իսպիրյան» բառերը փոխարինել «Սարգիս Գևորգյան» բառերով:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գաբրիելյան Արմեն
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Հարությունյան Իրինա
6.Մկրտչյան Գևորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

10.05.2017թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Հայանիստ համայնք, Էջմիածնի փող.,թիվ 17,հեռ.՝ (093)51-02-01,էլ.փոստ hayanist.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-ը մայիսի, 2017թ., N19-Ն

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017Թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և ելնելով անհրաժեշտությունից՝ *ավագանին որոշում է*՝

Հաստատել 2017թ. վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխությունները.
1.Վարչական բյուջեի ծախսային մասի փոփոխություն.
1)05.1.1 Աղբահանություն.
4241 հոդվածին ավելացնել 500.0 հազար դրամ աղբակույտերի մաքրման ծառայության համար և պլանը հաստատել 500.0 դրամ:
2)11.1.2 Պահուստային ֆոնդ.
4891 հոդվածից պակասեցնել 500.0 հազար դրամ և պլանը հաստատել 2035.9 հազար դրամ:

Ավագանու անդամներ՝
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Գաբրիելյան Արմեն
3. Գևորգյան Սարգիս
4. Կատանյան Լևոն
5. Հարությունյան Իրինա
6.Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

10.05.2017թ.
գ. Հայանիստ